ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՍԱՍԱՆՅԱՆՆԵՐԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Երրորդ դարի առաջին կեսին Իրանում տեղի ունեցավ դինաստիական հեղաշրջում։ Սասանյան Արտաշիրը սպանեց Արշակունի գահակալին և իր անունը դրեց նոր, դեռ սպիտակ արքայացանկում, որ հետո պետք է լրացվեր չորս դար։

Սասանյանները, իշխանության հասնելով, փորձում էին աքեմենյան օրինակով վերագծել Առաջավոր Ասիայի քաղաքական քարտեզը։ «Նա (Արտաշիրը) սպառնում էր, որ վերստին ձեռք է բերելու ամեն ինչ, որպես նախնիներից իրեն հասանելիք ժառանգություն, այն բոլորը, ինչ մի ժամանակ ունեին հին պարսիկները, մինչև Հելլենական ծովը»,— գրում է Դիոն Կասսիուսը[1]։

Թե ինչ չափերի էին հասնում առաջին Սասանյանների քաղաքական նկրտումները, դժվար է ասել, սակայն պարզ է, որ ամենից առաջ նրանք փորձեցին ուղղել իրենց արևմտյան սահմանագիծը։ Դրանով պայմանավորվեց Հայաստանի III դարի քաղաքական պատմությունը, որ պատմագիտական երկերում այնպես խառն է և անհստակ։

Այդ շրջանի համար, իբրև աղբյուր, կարևոր է Ագաթանգեղոսի երկը, որով և ստեղծվում է հետագա տրադիցիան։ Պատմիչը գրում է, որ հայոց Խոսրով թագավորը, լսելով Արտավանի մահը, չի կարողանում անմիջապես դուրս գալ Արտաշիրի դեմ, բայց հաջորդ տարին («ի միւս ևս ի գլուխ տարւոյն») իր զինակիցների հետ նրան պարտության է մատնում։ Դա առաջին բախումն էր։ Ծայր է առնում տևական պայքար Սասանյան Իրանի և Արշակունյաց Հայաստանի միջև, և պարսից արքան չի կարողանում ելք գտնել։ Նա դիմում է խարդավանքի։ Անակի ձեռքով, որ գլխավոր նահապետն էր Պարթևաց տէրութեանն, սպանել է տալիս Խոսրովին։ Հետագա ամբողջ պատմությունը հյուսված է Տրդատի և Լուսավորչի շուրջը։ Մեզ այս հատվածն է հետաքրքրում։

Խորենացին հենվում է Ագաթանգեղոսի վրա, բայց նա ունի և ուրիշ աղբյուր։ Խորենացու մոտ այդ շրջանը ընդգրկում է Արտաշիրի գահակալության

---

[1] Dionis Cassii Cocceiani, Historia Romana, Lipsiae, 1863, LXXX, 3, *հմմտ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 67 (այսուհետև՝ «Քննական տեսություն»)։*

Հ «Ինչպես հայտնի է,— գրում է Մանանդյանը,— երրորդ դարի առաջին կեսի պատմական անցքերը, որ տեղի էին ունեցել Հայաստանում, բանասիրական և պատմագիտական գրեթե բոլոր նոր երկերում խճճված են և սխալ են լուսաբանված» («Քննական տեսություն», էջ 73)։ Մանանդյանը որոշ պարզություն մտցրեց, բայց նորագույն ուսումնասիրություններում պատմական այդ անցքերը նորից խճճվեցին։

առաջին տարուց (227?)[3] մինչև Վալերիանոս կայսրը (253—260)։ Խորենացին Վալերիանոսի օրով է դնում Խոսրովի մահը։ Հայ պատմագրական ավանդույթի համաձայն Հայաստանը մնացել է անվաճ մինչև III դարի 50-ական թթ. վերջը։

Ինչպե՞ս են հարաբերում Ագաթանգեղոսի և Խորենացու տվյալները արտաքին աղբյուրներին։

Դիոն Կասսիուսը գրում է, որ Արտաշիրը երեք ճակատամարտերում Արտավանին հաղթելուց և նրան սպանելուց հետո պաշարում է Հատրան, «որպեսզի այդ քաղաքն իր համար հենարան դարձնի հռոմեացիների դեմ»։ Բայց քաղաքն առնել չի հաջողվում։ Նա Միդիայում, ինչպես և Պարթևստանում դրավում է մի շարք շրջաններ և դիմում Հայաստան։ «Այստեղ երկրի բնակիչները և միդիացիներից ոմանք ու Արտավանի որդիները,— գրում է Կասսիուսը,— նրան դուրս վանեցին, և նա, ինչպես ոմանք ասում են, փախավ։ Իսկ ուրիշներն էլ ասում են, որ ետ քաշվեց, որպեսզի ավելի մեծ զորք գումարի»[4]։

Ոմանք ասում են փախավ։ Ագաթանգեղոսի բնագրում նույնն է. փախըստեայ լինէր առաջի նոցա։ Այդպես և Խորենացու մոտ. Խոսրովը Արտաշիրին փախուստի է մատնում՝ ճակատ տուեալ ի փախուստ դարձուցանէ։ Բայց, թերևս, ճիշտ է մյուս հաղորդումը. ետ քաշվեց, որպեսզի ավելի մեծ զորք գումարի։

Այդ հաղթանակն, ինչպես երևում է, տպավորիչ էր, և հայ թագավորը հրամայում է. «յեօթն բագինս մեհենից ուխտաւոր լինել պատկերաց կռոց դիցն պաշտամանն»։

Հաջորդ տարին Արտաշիրը նորից դուրս է գալիս արշավանքի։ Այս անգամ նա շրջանցում է Հայաստանը։ Արագ գրավելով Միջագետքը, Արտաշիրը մտնում է Ասորիք և Կապադովկիա։ Բախումը կայսրության հետ անխուսափելի էր։ Բայց պահը հարմար չէր Հռոմին։ Ալեքսանդր Սևերոսը իր լեգեոններով գալիս է Անտիոք և 232 թ. պատերազմական գործողություններ սկսում պարսից դեմ, իսկ մեկ տարի հետո՝ 233 թ., վերադառնում Անտիոք։ Արշավանքն այդպես էլ ավարտվեց, Միջագետքը մնաց հռոմեական։

Ալեքսանդրը իր բանակը բաժանել էր երեք մասի։ Զախից շարժվող զորամիավորումը պետք է անցներ Հայաստանի վրայով, որ Հռոմի բարեկամն էր, ինչպես վկայում է Հերոդիանոսը։ Այդ զորախումբը մտավ Միդիա, ավերեց երկիրը, այրեց շատ գյուղեր և ավարը վերցրեց տարավ,— կարդում ենք պատմիչի մոտ։ «Աւար առեալ զերկիրն ամենայն՝ յապականութիւն դարձուցանէր զշենանիստ քաղաքացն և աւանացն ցանկալեաց, զշէն երկիրն ամենայն թափուր և աւերակ թողոյր»[6],— գրում է Ագաթանգեղոսը Խոսրովի մասին։

---

3 Սասանյան դինաստիայի հաստատման տարին որոշ չէ, նրա հաստատման սահմանն է 222-ից մինչև 227 թ. (տե՛ս Th. Nöldeke, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sassaniden. Aus der arabischen Chronik des Tabari, Lieden, 1879, էջ 410; S. H. Tagizadeh, The Early Sassanian—Bulleten of the School of Oriental studies, University of London, XI, 1943—46, էջ 258—311)։

4 Dio. Cass., LXXX, 3, հմմտ. «Քննական տեսություն», էջ 67։

5 Herodianus, Ab excessu divi Marci libri octo, Lipsiae, 1922, VI, 5, հմմտ. «Քննական տեսություն», էջ 79.

6 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, Ա, 12։

Հայկական աղբյուրների համաձայն հռոմեական բանակի այդ շարժումը, որ գլխավորում էր Յունիոս Պալմատուսը, զուգամետ է Խոսրովի երկրորդ արշավանքին։ Հերոդիանոսը վկայում է, որ Մաքսիմինոսը մեծ բանակ էր ժառանգել Ալեքսանդրից։ Նա տարավ գերմանացիների դեմ մավրուսական նետաձիգներ և օսրոյենցի ու հայ աղեղնաձիգներ, «որոնցից մի մասը հպատակներ էին, մի մասն էլ բարեկամ ու դաշնակից»[7]։ Ալեքսանդրի բանակում հայկական տարրը այնքան ուժեղ էր, որ նույնիսկ կարող էր կայսեր թեկնածություն առաջադրել, եթե ճիշտ է Տրեբելլիոս Պոլլիոնի վկայությունը[8]։

Արաաշիրը չօգտվեց Ալեքսանդր Սևերոսի անեռանդ գործողություններից։ Մոմզենը բացատրում է, որ պարսից զինվորները հոգնել էին և ցրվեցին տները[9], բայց թերևս ճիշտ է Խրիստենսենը՝ շտապում էին արևելք, անհնազանդ հպատակներին խաղաղեցնելու համար[10]։ Ամեն դեպքում դադարը տևեց չորս տարի, և 238 թ. պարսից զորքերը ներխուժեցին հռոմեական Միջագետք։

Մինչ այդ Հռոմը չէր կարողանում որոշել իր բարձրագույն իշխողին, և կայսրերի ճակատագիրն անհաստատ էր։ Վերջապես, 238 թ. կայսր ճանաչվեց Գորդիանոս III-ը (238--244), որը 242 թ. պատերազմ է հայտարարում պարսիկներին և գալիս արևելք։ Այդ ժամանակ արդեն Արտաշիրին գահակից էր նրա որդին՝ Շապուհը։ Գորդիանոսը վերագրավում է ամբողջ հռոմեական Միջագետքը և շարժվում Տիզբոն։ Բայց հաջողությունը դավաճանում է երիտասարդ կայսեր. մեռնում է պրեֆեկտ Ֆուրիոս Տիմեսիթեոսը՝ կայսեր աներն ու խորհրդատուն։ 244 թ. սկզբներին Միսիխեսի մոտ հռոմեացիները Շապուհից ծանր պարտություն են կրում։ Գորդիանոսը սպանվում է, և Փիլիպպոս Արաբը կայսր է հռչակվում։ Նա շտապում է պարսիկների հետ համաձայնության գալ։ Չնայած Հռոմի պարտությանը, պահպանվեց միևնույն դրությունը, և կայսրության արևելյան սահմանները մնացին անփոփոխ։

Այդ դեպքերն արտացոլված են բյուզանդական աղբյուրներում։ Զոսիմոսը գրում է. «Շատ ժամանակ անցնելուց հետո Գորդիանոսը պատերազմեց պարսից թագավորի դեմ և պատերազմի ընթացքում սպանվեց, սակայն նաև այս հաղթանակից հետո պարսիկները ոչ մի բան չգրավեցին հռոմեացիների հպատակության տակ եղածներից։ Բայց երբ Փիլիպպոսն իշխանության գլուխ անցավ, նա պարսիկների հետ կնքեց ամենաամոթաբեր հաշտությունը»[11]։ «Նա հաշտություն կնքելով պարսից թագավոր Շապուհի հետ,— կարծես շարունակում է Զոնարասը,— դադարեցրեց պատերազմը պարսիկների դեմ և զիջեց նրանց Միջագետքն ու Հայաստանը, բայց երբ տեսավ, որ հռոմեացիները վշտացած են այդ երկրների կորստի պատճառով, մի փոքր հետո դաշնագիրն անվավեր համարեց»[12]։

---

7 Herod., VII, 2, հմմտ. «Քննական տեսություն», էջ 80։

8 «Մարիշները ասում են, որ նրան (Տիտոսին) կայսր դարձրին հայկական աղեղնաձիգները, որոնց Մաքսիմինոսը ատում էր և վիրավորել էր, որպես Ալեքսանդրի դաշնակիցներ»,— գրում է Պոլլիոնը („Scriptores Historiae Augustae", XXIV, XXXII, 3)։

9 Т. Моммзен, История Рима, М., 1949, V, էջ 379։

10 „The Cambridge Ancient History", vol. XII. 1939, էջ 130 (CAH).

11 Zosimi, Historia nova, Lipsiae, 1887, III, 32, 4, հմմտ. «Քննական տեսություն», էջ 83։

12 „Zonarae epitome historiarum", Lipsiae, 1870, XII, 19, հմմտ. «Քննական տեսություն», էջ 83։

Պատմիչների այս հաղորդումները ճիշտ են հասկացվել պատմագիտության մեջ։ «Այդքան նվաստացուցիչ հաշտության կնքումը այնպիսի վրդովմունք առաջացրեց,— գրում է Մոմզենը,— որ կայսրը չխիզախեց կատարելու հաշտության պայմանները և այդ երկրներում կայազորներ թողեց»։ «Այդպես է շարադրում դեպքերի ընթացքը Զոնարասը, դրա հետ համաձայն է և Զոսիմոսի հաղորդումը։ Հետագայում մենք իսկապես տեսնում ենք, որ Հայաստանն անմիջապես չանցավ պարսիկներին»,— ծանոթագրում է նա[13]։ Գուտշմիդը և նրա հետ Տաշյանն ու Աստուրյանը Զոնարասի հաղորդումը համարում են «թեև չափազանցված, բայց ոչ անհիմն»[14]։

Ս. Երեմյանը առաջադրում է նոր վարկած. նա գտնում է, որ Փիլիպպոսի դաշնագրությամբ Հայաստանը բաժանվեց Հռոմի և Իրանի միջև, որ և Հայաստանի առաջին բաժանումն էր. «Նախկին հետազոտողները,— գրում է նա,— իրենց ձեռքի տակ ունենալով միայն բյուզանդական պատմիչների վկայությունները, որոնք նշված դեպքերից մի քանի դար հետո են գրվել, ճիշտ եզրակացության չէին հանդում։ Նրանց (Մոմզեն, Նյոլդեքե, Խալաթյանց, Մարկվարտ, Մանանդյան և այլն) կարծիքով իրականում խաղաղության պայմանները մնացել էին թղթի վրա և Մեծ Հայքի թագավորությունը պահպանվել էր իր նախկին վիճակում»[15]։ Ս. Երեմյանը օգտվում է միևնույն աղբյուրներից, բայց հանգում է այլ եզրակացության։ «Հայոց թագավոր Տրդատ երկրորդը, որ հույս ուներ հռոմեացիների ռազմական օգնության վրա,— գրում է նա,— լքվել էր դեպի Հռոմ շտապող Փիլիպպոս Արաբ կայսեր կողմից։ Ահա այս ժամանակ, ինչպես երևում է, Շապուհ առաջինի զորքերը գրավել են Մեծ Հայքի թագավորության մեծ մասը, և Փիլիպպոս Արաբը հարկադրված պիտի ճանաչեր ստեղծված իրադրությունը։ Նա Շապուհ առաջինի հետ կնքում է խաղաղության պայմանագիր, զիջելով պարսիկներին Հայաստանի մեծ մասը»[16]։

Այնպես է ստացվում, որ Հայաստանը արդեն նախօրոք գրավված էր Շապուհի կողմից, և Փիլիպպոս Արաբը հարկադրված պետք է ճանաչեր ստեղծված իրադրությունը։ Իսկ պատմիչների համաձայն Շապուհի հաղթա-

---

[13] „История Рима", էջ 380։ Տե՛ս նաև Nöldeke, Aufsätze zur persischen Geschichte, Leipzig, 1887, էջ 93։ Г. Халатьянц, Очерк истории Армении, М., 1910, էջ 338։ Markwart, Untersuchungen zur Geschichte von Eran, zweites Heft, Leipzig, 1905, էջ 218—220։ А. Аннинский, Древне Армянские историки как исторические источники, Одесса, 1899, էջ 43։ «Ինքնական տեսություն», էջ 83—84։

[14] A. Gutschmid, Agathangelos,—Zeitschrift der Deutschen Margenlandischen Gesellschaft, Bd. XXXI, 1877, էջ 48։ Հ. Տաշյան, Ագաթանգեղոս առ Գեորգա Ասորի եպիսկոպոսին և ուսումնասիրություն Ագաթանգեղա գրոց, Վիեննա, 1891, էջ 102։ Աստուրյան, Քաղաքական վերաբերություններ ընդմիջ Հայաստանի և Հռոմա, Վենետիկ, 1912, էջ 241։

[15] Ս. Տ. Երեմյան, Մեծ Հայքի թագավորության բաժանումը Սասանյան Իրանի և Հռոմեական կայսրության միջև (244—253 թթ.) («Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 1, էջ 74—75)։ Այդ պայմանագրի մասին նույն հոդվածում պատմաբանը ունի և ուրիշ դիտողություններ։ 73-րդ էջում Ս. Տ. Երեմյանը գրում է. «Հիրավի, փաստերը ցույց են տալիս, որ չնայած պարտության, Հռոմեական կայսրության տերիտորիաները Արևելքում մնացել էին նույնությամբ։ Շապուհը սահմանափակվել էր միայն ռազմատուգանքով», իսկ 80-րդ էջում՝ «245 թ. խաղաղության դաշնագրի համաձայն Հռոմեական Մեսոպոտամիա պրովինցիան անցել է Սասանյաններին»։

[16] «Մեծ Հայքի թագավորության բաժանումը», էջ 73։

նակից հետո էլ պարսիկները «ոչ մի բան չգրավեցին հռոմեացիների հպատակության տակ եղածներից», և Հայաստանն ու Միջագետքը պայմանագրով են զիջվել պարսիկներին։ Ս. Երեմյանը նշում է, որ Փիլիպպոսի կնքած հաշտությունը Զոսիմոսը կոչում է «ամենաամոթաբեր», որովհետև Հայաստանը մատնեց թշնամուն։ Զոսիմոսից այդպիսի հետևության դժվար է հանդել։ Նա Հայաստանի և առհասարակ որևէ երկրի անուն չի տալիս։ Նա ասում է, որ Շապուհի հաղթանակից հետո էլ դեռ հռոմեական հպատակության տակ եղածներից պարսիկները ոչ մի բան չգրավեցին և անմիջապես շարունակում. «Բայց երբ Փիլիպպոսն իշխանության գլուխ անցավ, նա պարսիկների հետ կնքեց ամենաամոթաբեր հաշտությունը»։

Ինչպես տեսնում ենք, «ամենաամոթաբեր հաշտությունը» վերաբերում է հռոմեական հպատակության տակ եղած երկրներին (եթե ըստ Զոսիմոսի այդ հաշտությունը սահմանային հարցեր է լուծել), ուրեմն, առհասարակ, չէր կարող կապ ունենալ Հայաստանի հետ, քանի որ այն Հռոմի հպատակության տակ չէր, այլ համարվում էր նրա «դաշնակիցն ու բարեկամը»։

Հայաստանի բաժանման վարկածի մեջ առանձին գեր ունի Եվագրիոսի վկայությունը։ «Մեծ Հայաստանն առաջ հռոմեացիների հպատակն էր,— գրում է Եվագրիոսը,— բայց Փիլիպպոսը հաջորդեց Գորդիանոսին, ովքեր այն Շապուհին, որով Փոքր Հայքը հռոմեացիների ձեռքը մնաց, իսկ բոլոր մնացածը՝ պարսիկների»[17]։ Մարկվարտը կարծում է, որ Փոքր Հայքի տակ Եվագրիոսը նկատի է ունեցել Հայաստանի հարավային շրջանները, Ծոփքը և Կորդուքը։ «Իսկապես Ծոփքը պիտի մնար կայսրությանը, իսկ թե ինչպես կարող էր առանց վերջինիս սահմանակից Աղձնիք նահանգի Կորդուքը մնալ հռոմեացիների ձեռքում՝ մնում է անհասկանալի։ Սասանյանները այնքան ուժեղ էին, որ համենայն դեպս, իրենց թիկունքում գտնվող Կորդուքը չէին զիջի հռոմեացիներին,— գրում է Ս. Երեմյանը,— Եվագրիոսի մոտ գործածած «Փոքր Հայքի» միակ ճիշտ վերծանումն այն կլինի, եթե նրա տակ հասկանանք Ծոփքը և նախկին Փոքր Հայքի հիմնական մասը կազմող (մինչև մ. թ. 66 թ.) Բարձր Հայք նահանգը»։

Այս նախադրյալից էլ ծագում է 244 թ. դաշնագրությամբ Հայաստանի բաժանման վարկածը. «Եթե մեր եզրակացությունը ճիշտ է,— շարունակում է Ս. Երեմյանը,— ապա ստացվում է, որ Հռոմեական կայսրությանը մնացել էին Մեծ Հայքից միայն երկու նահանգ՝ Ծոփքը և Բարձր Հայքը, այսինքն նույն երկրամասը, ինչ որ կայսրությունը ստացել էր 387 թ. Մեծ Հայքի թագավորության բաժանման ժամանակ, ուստի 244 թ. դաշնագրով երկու աշխարհակալությունների միջև անցնող սահմանագիծը նույնը պիտի լիներ, ինչ որ հետագայում՝ 387 թ. հաստատված սահմանագիծը»[18]։

Անտեղի է Եվագրիոսի մոտ Փոքր Հայք ըմբռնման մեջ ուղղումներ մտցնել։ Եվագրիոսը չէր կարող շփոթել Փոքր Հայքը։ Նա չի ասում Հայաստանի փոքր մասը, կամ նման մի բան, այլ՝ Փոքր Հայք (Armenia minor), իբրև երկրի հատուկ անուն, և Եվագրիոսը դրա տակ այլ բովանդակություն չէր դնի։ Այդ

---

[17] Evagrios, Historia ecclesiastica, V, 7, հմմտ. «Քննական տեսություն», էջ 83։

[18] «Մեծ Հայքի թագավորության բաժանումը», էջ 74։

անունը նա տալիս է Մեծ Հայքի (Armenia maior) անվան հետ միասին։ Պարզ է, որ նկատի է ունեցել պատմական Փոքր Հայքը[19]։

Մարկվարտին այլ կերպ դատելու առիթ է տվել Եվագրիոսի արտահայտության ձևը, որը մտածել է տալիս, թե Փոքր Հայքը կարծես թե Մեծ Հայքի հատվածն է։ Եվագրիոսը Մեծ Հայքը հռոմեացիներին հպատակ երկիր է համարում, և որովհետև Փոքր Հայքն ինքնին հռոմեացիների տիրապետության տակ էր, նա Մեծ ու Փոքր Հայքերը դիտում է իբրև մեկ ամբողջություն՝ Հայաստան։ Եվ եթե Մեծ Հայքը Փիլիպպոսը դիջում է պարսիկներին, ապա հասկանալի է, որ Փոքր Հայքն մնում է հռոմեացիների ձեռքը, իսկ բոլոր մնացածը՝ պարսիկների։

Միայն Մարկվարտն էր, որ փորձեց վերծանել այս մեջբերման մեջ գործածված «Փոքր Հայք» հասկացությունը» (Ս. Երեմյան)։ Այս, և սխալվում է միայն Մարկվարտը։ Սոմզենը, Խրիստենսենը, Էնսլենը և ուրիշներ Եվագրիոսի վկայության մեջ «Փոքր Հայքը» ընդունում են նրա տրադիցիոն իմաստով։

«Եթե Եվագրիոսի խոսքերով այդ ժամանակ Հռոմի ձեռքին մնաց միայն Փոքր Հայքը, ապա դա ճիշտ է լոկ այնքանով, որ խաղաղությունից հետո հավանարար Մեծ Հայքի թագավորի կախվածությունը սոսկ անվանական է եղել»,— գրում է Մոմզենը[20]։ Էնսլենը գտնում է, որ Միջագետքը և Փոքր Հայքը մնացին հռոմեացիներին, ուր Փիլիպպոսը կուսակալ էր նշանակել իր եղբորը՝ Պրիսկուսին[21]։ Խրիստենսենը նույնպես գտնում է, որ Միջագետքը և Փոքր Հայքը մնում էին հռոմեացիների ձեռքին, իսկ Մեծ Հայքի մասին, իբրև անկախ երկրի, պայմանագրում խոսք լինել չէր կարող[22]։

Պատմաբանը իր վարկածի համար վկայաբերում է Քաաբա ի Զարդուշտի արձանագրությունը. «Մեր ենթադրությունը հաստատվում է վերջերս հայտնաբերված աղբյուրներով, առաջին հերթին Քաաբա ի Զարդուշտի Շապուհ I-ի արձանագրության տվյալներով»[23]։

Քաաբա ի Զարդուշտի արձանագրությունը (SKZ) այդպիսի հիմքեր չի տալիս։ Այն լիովին համաձայն է բյուզանդական աղբյուրներին։ Արձանագրությունը Շապուհ I-ը հրամայել է փորագրել 262 թ.։ Դա նրա արևմուտք կատարած երեք արշավանքների կամ երեք հաղթանակների տարեգրությունն է։ Առաջինը տեղի ունեցավ Միսիխեսի մոտ, երկրորդը՝ Բարբալիսոսի տակ և երրորդը՝ Եդեսիայի ու Խառանի միջև։ Մեզ հետաքրքրում է առաջին արշավանքը. «Ապա երբ ես նոր էի հաստատվել իշխանության,— կարդում ենք այնտեղ,— Գորդիանոս կայսրը ամբողջ հռոմեական, գոթական և գերմանական թագավորությունների հետ ուժեր կազմեց և եկավ Ասորեստանի դեմ, ընդհուպ մինչև արիների թագավորությունը։ Եվ Ասորեստանի սահմանի վրա Միսիխեսի մոտ մի մեծ ճակատամարտ տեղի ունեցավ։ Գորդիանոս կայսրը

---

[19] Ասենք թե այդպես չէ. բայց ինչո՞ւ չի կարող Կորդուքը առանց Ադձնիքի մնալ հռոմեացիների ձեռքին, եթե ընդունվում է, որ Միջագետքը պարսիկներին չէր տրված։ Միջագետքը հյուսիս-արևելքից սահմանակից է Կորդուքին և ավելի կարելի է մտածել, որ Ադձնիքն է հռոմեացիների թիկունքում, քան Կորդուքը՝ պարսիկների, որովհետև Սասանյաններն այդքան ուժեղ էին։

[20] «История Рима», էջ 380։

[21] САН, էջ 380.

[22] նույն տեղում, էջ 131։

[23] «Մեծ Հայքի թագավորության բաժանումը», էջ 74։

սպանվեց։ Հռոմեական ուժերը ջարդվեցին։ Եվ հռոմեացիները Փիլիպպոսին դարձրին կայսր։ Ապա Փիլիպպոսը եկավ մեզ մոտ հաշտություն խնդրելու և տվեց 500 հազար դինար փրկագին իր ընկերների կյանքի դիմաց և դարձավ մեզ հարկատու։ Եվ մենք այս դեպքի առթիվ Միսիխեսը անվանեցինք Պերոզ Շապուհր»[24]։

Ուրեմն արշավանքը վերջանում է նրանով, որ Փիլիպպոսը հաշտություն է խնդրում («Ապա Փիլիպպոսը եկավ մեզ մոտ հաշտություն խնդրելու») և գերված զինվորների համար վճարում 500 հազար դինար փրկագին. «Դարձավ մեզ հարկատու»,— ավելացնում է Շապուհը պարծանքով։ Ուրիշ ոչինչ։ Մյուս դեպքերում նա թվում է այն երկրները և քաղաքները, որ գրավել կամ ձեռք է բերել։ Այստեղ տերիտորիալ նվաճումների մասին խոսք չկա։ Եթե Միջագետքը և Հայաստանը զիջված լինեին պարսիկներին, անշուշտ դա կարտահայտվեր արձանագրության մեջ։ Արձանագրությունը պարզ վկայում է, որ չնայած հաղթանակին, Շապուհը չի կարողացել որևէ առավելության հասնել, և երկու տերությունների միջև սահմանն անցել է նույն գծով։ Այդպես է և բյուզանդական աղբյուրներում։

Բայց Հայաստանը արդյո՞ք նախապես զիջվեց պարսիկներին, իսկ հետո կայսրը չուզեց կատարել իր պարտավորվածությունը (Մոմզեն), մենա՞կ թողնվեց պարսիկների դեմ (Շիլլեր), հաշտությունը նրա՝ իբրև անկախ երկրի հետ ոչ մի առնչություն չունեցա՞վ (Խրիստենսեն), թե՞ պարսիկներն արդեն գրավել էին և Փիլիպպոսը վավերացրեց (Երեմյան)։

SKZ-ը օգնում է պարզություն մտցնելու։ «Այնուհետև կեսարը երկրորդ անգամ (հունարեն օրինակում՝ նորից) ստեց և Արմենիայում անարդարություն կատարեց»[25],— այդպես է սկսում Շապուհն իր բարբալիսոսյան կամ երկրորդ արշավանքի «տարեգրությունը»։ Նշանակում է արդեն ստել էր, որ երկրորդ անգամ (կամ նորից) ստեց։ Բայց ե՞րբ ստեց առաջին անգամ։ Նա, անշուշտ, նկատի ուներ Փիլիպպոսի պայմանագիրը, քանի որ նորից ստությունը վերաբերում է հաջորդ կամ բարբալիսոսյան արշավանքին։ Դրանով SKZ-ն հաստատում է, որ Փիլիպպոսն իսկապես հաշտությամբ պարսիկներին է զիջել Միջագետքը և Հայաստանը, կամ համաձայնվել չառնչվելու Հայաստանի հետ, բայց չի կատարել իր պայմանավորվածությունը, ինչ վկայում է Ջոնարասը։

Այդպիսով, 244 թ. հաշտությունից հետո Հայաստանը պահպանում է իր նախկին դրությունը։ Շապուհը փորձ չի անում զենքով ստիպելու Փիլիպպոս Արաբին պահել իր կայսերական խոսքը։ Նրան խաղաղությունն անհրաժեշտ էր արևելքում նոր արշավանքի համար։ 245 թ. մինչև 248/9 թթ. Շապուհը զբաղված էր քուշաններին դեմ պատերազմով[26], ապա վերադառնում է արևմուտք և սկսում իր երկրորդ արշավանքը։ Ակիթը, ինչպես տեսանք, Հայաստանն էր, կեսարի ստությունը։ Շապուհի առաջին արշավանքն ուղղված էր Գորդիանոսի դեմ, որը սպանվեց, և նրան փոխարինեց Փիլիպպոսը, երրորդ արշավանքը՝ Վալերիանոսի դեմ, որ գերի ընկավ։ SKZ-ը հիշում է կայսրերի

---

24 M. Springling, Third Century. Iran, Sapor and Kartir, Chicago, 1953.

25 Նույն տեղում, էջ 25։

26 Տե՛ս В. Г. Луконин, Завоевания Сасанидов на Востоке и проблема Кушанской абсолютной хронологии, ВДИ, 1969, № 2, էջ 34։

անունները, բայց ո՞վ էր Հռոմի կայսրը երկրորդ արշավանքի ժամանակ, չի ասված։ Արձանագրությունը տալիս է նրա անունը, ով եղավ երկրորդ պատերազմի առիթը։ Կեսարը նորից՝ ստեց. մի անգամ ստողը Փիլիպպոս Արաբն էր և եթե նորից ստեց, ուրեմն խոսքը նրան է վերաբերում։

Այժմ տեսնենք, թե որն էր կեսարի երկրորդ ստությունը։

Խորենացին պատմում է, որ Խոսրովը պարսիկների դեմ արշավելու համար օգնություն է խնդրում Փիլիպպոսից։ Փիլիպպոսը հռոմեական զնդեր չի ուղարկում, բայց հրամայում է Հռոմի արևելյան տիրություններում գտնվող երկրներին զինակցելու նրան. «Աղմուկ խռովութեան լեալ ի թագաւորութեանն Փիլիպպոսի՝ ոչ կարաց ի Հռոմայեցւոց զնդացն պարապեցուցանել, առ ի զօրաւիգն լինել Խոսրովայ։ Այլ օգնէ նմա ի ձեռն գրոյ, հրամայելով սատարել նմա յամենայն կողմանց։ Որոց ընկալեալ զայսպիսի հրաման՝ հասանեն նմա յօգնականութիւն յԵգիպտոսէ և յանապատէն մինչև ի ծովեզերսն Պոնտոսի»։ Խոսրովը հաղթանակ է տանում. «Որոյ գտեալ զայսչափ բազմութիւն, խաղայ ի վերայ Արտաշրի, և ճակատ տուեալ՝ ի փախուստ դարձուցանէ, թափելով ի նմանէ զԱսորեստան և զայլ արքայանիստ աշխարհս»[27]։

Խորենացու այս հաղորդումը լրացնում է SKZ-ի տվյալները։ Ահա թե ինչպես կեսարը նորից ստեց։ Նա Հայաստանի նկատմամբ դարձյալ չեզոքություն չի պահում, որ և առիթ է տալիս Շապուհի երկրորդ արշավանքին։ Խոսրովի ելույթը պետք է տեղի ունեցած լինի 249 թ. ոչ ուշ։ 249-ը Փիլիպպոսի թագավորության վերջին տարին է։

Անշուշտ, Խոսրովը (Տրդատ II) հարմար պահ էր ընտրել իր ռազմերթի համար։ Այդ ժամանակ Շապուհը զբաղված էր քուշանների դեմ պատերազմով, և Տրդատը փորձում էր հարվածել նրան արևմուտքից, քուշանների հետ ստեղծելով ընդհանուր ճակատ։

Ճիշտ է և ոչ անախրոնիզմ, որ Խորենացին Շապուհի փոխարեն տալիս է Արտաշիրի անունը։ Դա Արտաշիր I-ը չէ, այլ՝ Որմիզդ-Արտաշիրը, Շապուհ I-ի որդին, որ ղեկավարում էր պատերազմական գործողությունները արևմուտքում և դարձավ «Հայաստանի մեծ թագավոր»։

Հաջորդ տեղեկությունը մենք կարդում ենք Զոնարասի մոտ. «Առ սովաւ սկսան խլրտել Պարսիկք, որ հասին գրաւեցին զՀայաստան, ուստի փախեաւ արքայն (Հայոց) Տրդատ, այլ որդիք նորա անկան առ Պարսիկս»[28], «Առ սովաւ» ասելով՝ Զոնարասը նկատի ունի Գալլոս կայսեր (251—253)։ Եթե պարսիկք հասին գրաւեցին և դա՝ առ Դաղդեաւ, ապա մինչ այդ նրանք դեռ չէին հասել և գրավել, և Հայաստանը մնում էր անվաճ։

Բայց նույնիսկ Գալլոսի ժամանակ և նրանից հետո էլ, մինչև Վալերիանոսի գերումը, Հայաստանը զենքով չէր նվաճված։ Հայաստանի գրավումը այլ հանգամանքների հետևանք էր։ Դա թույլ են տալիս մտածելու Զոնարասի հաղորդումը և SKZ-ը[29]։

Գալլոսի ժամանակ Հայաստանում կատարվող դեպքերը թերևս Շապուհի

---

[27] «Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, Բ, էջ։

[28] Zonaras, XII, 21, հմմտ. Տաշյան, Ագաթանգեղոս առ Գեորգա ասորի, էջ 106։

[29] «Շապուհը գրավեց Հայաստանը։ Չի բացառված, որ այն ենթարկվեց նրան ինքնակամ»,— նկատում է Մոմզենը («История Рима», էջ 387)։ Լուկոնինը գտնում է, որ Իրանի կոնֆեդերացիայում այդ շրջանից մինչև 262 թ. Հայաստանն ավելի շուտ կախվածության մեջ էր, քան զենքով նվաճված («Завоевания», էջ 32)։

երկրորդ արշավանքի նախերգանքը եղան։ Այս արշավանքի ժամանակագրությունը չի ճշտված[30], բայց ամեն դեպքում հայ ավագանու հետ Շապուհի քաղաքական գործառնությունն ավարտվեց 252/3 թ., իսկ Հռոմի հետ նրա պատերազմական հիմնական գործողությունները ծավալվել են 253 թ. հետո միայն, և ոչ մի խաղաղություն չի կնքվել[31]։

Շապուհն իր արշավանքն սկսում է Ադիաբենեի վրայով։ Նա հասնում է մինչև Կիլիկիա և Կապադովկիա, անցնում Մեծ Հայքի արևմտյան եզրերով, դրավում Դոմանա քաղաքը, որ ընկած է Փոքր Հայքի սահմանին։ Իսկ Սև ծովի փոքրասիական ափերը ողողում էին սկյութական ցեղերը, գոթերը և ալամանները։ Բարբալիսոսի մոտ Շապուհը մեծ հաղթանակ է տանում։ Նա հաշվում է 37 քաղաք և բերդ (SKZ-ում թվարկված է 29), որ նվաճել է իր երկրորդ արշավանքի ժամանակ։ Մեծ Հայքի կենտրոնական և ոչ մի բնակավայր չի հիշատակված։ Զոսիմոսը նույնպես, խոսելով այդ արշավանքի մասին, Հայաստանի անունը չի տալիս։ Նա գրում է. «Մտին Պարսիկք յԱսիա եղծեալ աւերեալ զՄիջագետս և յԱսորիս ևս դիմէին խաղացեալք մինչև ցԱնտիոք, մինչև առնուլ ևս զայն, որ ամենայն արևելից մայր քաղաքաց էր. զոմանս ի բնակչաց կոտորէին և զայլս խաղացուցանէին ի գերութիւն և առեալ աւար բազում յոյժ ի բաց մերժէին անտի» (հմմտ. Տաշյան, էջ 106)։ Հայաստանը հարձակման գծից մնում է դուրս։ Շապուհի «ձիերն ու մարդիկ» չեն

---

[30] Հռոմի դեմ «Շապուհի երկրորդ արշավանքը սկսվեց շուրջ 256 թ.»,— գրում է Լուկոնինը։ «Մեծ պատերազմը» հավանաբար սկսվեց 254 կամ 255 թ.»,— շարունակում է մի փոքր հետո Լուկոնինը, ինչ-որ հակասելով իրեն («Завоевания», էջ 33 և 34)։ Նա հենվում է Honigmann-ի և Maricq-ի վրա („Recherches sur les Res Gestae divi Saporis", Bruxelles, 1953, էջ 131—151)։ Cage-ն այլ կարծիքի է, նա մեծ սկիզբը դնում է 253 թ. („La montée des Sassanides", Paris, 1964, էջ 158)։

[31] «252/3 թ. երկու մարանչող պետությունների միջև խաղաղություն էր կնքվել և ճանաչվել էին 244 թ. հաշտության պայմանները»,— գրում է Ս. Երեմյանը («Մեծ Հայքի թագավորության բաժանումը», էջ 82), «Սրանով վերջացավ Սասանյան Իբանի երկրորդ արշավանքը»,— լրացնում է նա (նույն տեղում, էջ 81)։ Համաձայն Ս. Երեմյանի հռոմեացիները, Գորդիանոսից մինչև Վալերիանոս, պարսիկների հետ խաղաղություն են կնքել 243, 244, 245, 253 և 256 թթ. (տե՛ս, համապատասխանաբար, «Մեծ Հայքի թագավորության բաժանումը», էջ 75, 76, 80, 82)։ Բացի 244 թ. ոչ մի խաղաղություն չի կնքվել։ Գոնե աղբյուրները չեն հաղորդում որևէ տվյալ։ Հեղինակի այդ ցանկի մեջ 243 և 245 թթ. թերևս վրիպակ են, 253 թ.՝ անհասկանալի, իսկ 256 թ. համար նա հետևում է Լուկոնինին։ Վերջինս, հենվելով Նախշ ի Ռուստեմի մի բարձրաքանդակի վրա, գրում է. «Շուրջ 256 թ. պատերազմը ընդհատվել է և խաղաղություն կնքվել։ Մենք չգիտենք պայմանները» («Культура Сасанидского Ирана», М., 1969, էջ 57)։ «Շուրջ 256 թ. պատերազմական գործողությունները դադարեցին և երկու աշխարհակալությունների միջև կնքվեց խաղաղություն, որի կոնկրետ պայմանների մասին մենք տեղեկություն չունենք»,— գրում է Ս. Երեմյանը («Մեծ Հայքի թագավորության բաժանումը», էջ 82)։ Վերևում տեսանք (ծան. 30), որ Լուկոնինը հռոմեացիների դեմ Շապուհի երկրորդ պատերազմի սկիզբը համարում էր 256 թ. Թերևս նույն 256 թ. եղել է և՛ պատերազմի սկիզբը և՛ հաշտության, բայց այդ կարճ պահի համար բարձրաքանդակ չէին ստեղծի։ Իսկ եթե պատերազմի սկիզբը համարենք նրա ընդունած մյուս թիվը՝ 254 կամ 255 (ծան. 30), այդ դեպքում հնարավոր է, որ պատերազմը դադարել է որոշ ժամանակից հետո (256 թ.), բայց Լուկոնինը անմիջապես ավելացնում է. «Պատերազմը շարունակվեց փաստորեն առանց ընդհատման մինչև 262 թ.» («Завоевания», էջ 34)։ Եթե պատերազմը 254/5-ից մինչև 262 թ. շարունակվել է առանց ընդհատման, ապա այլևս խաղաղության տեղ չի մնում։ 256 թ. խաղաղություն չի կնքվել և Նախշ ի Ռուստեմի բարձրաքանդակը ուրիշ մեկնություն է պահանջում։ Վալերիանոսը արևելք եկավ ոչ թե հաշտության համար, այլ նվաճված երկրները ետ վերցնելու։ Որոշ տվյալների համաձայն նա արևելք է եկել նույն 256 թ.։

մտնում այնտեղ։ Այդ նշանակում է, որ մինչ այդ Հայաստանն անցել էր պարսիկների կողմը։ Եթե այն զենքով նվաճվեր, Շապուհը չէր մոռանա այդ մասին փորագրել տալ Քաաբա ի Զարդուշտի պատերին։

Այդ ժամանակ կայսրությունը զբաղված էր գերմանական ցեղերով, որոնք ծանր նստել էին Հռոմի ճակատագրին։ Ծայր էր առել ժանտախտը, և հռոմեական արևելքը մնացել էր գրեթե անտերունչ, ուր ազատորեն զբոսնում էին հյուսիսային հեներն ու թշնամական ղորախմբերը։ Նրանց պարբերական ներխուժումները թուլացրել էին Հռոմի դիմադրողականությունը։ Այս պայմաններում Հայաստանում բարձրանում է պարսկական կողմնակցությունը, որ երկրում քաղաքական հող ուներ ու ավանդույթ։ Դեպի արևմուտք մեծ արշավանքի դուրս գալուց առաջ Շապուհը նախ ապահովում է իր թիկունքը. նա հրապուրում է հայ ավագանուն, և թագավորը փախչում է հունաց կողմերը, իսկ որդիները հարում են պարսիկներին։ Երկիրը երկարատև պայքարից հոգնած՝ տեղի է տալիս։ Այդպես Հայաստանը ճանաչեց պարսից գերիշխանությունը, առանց նրա կողմից նվաճվելու։ Պահպանվեց նախկին դինաստիան[32]։ Գահ է բարձրանում Տրդատի որդիներից մեկը։

Ազգային ավանդույթի համաձայն Խոսրով թագավորը սպանվեց պարսից արքայի խարդավանքով, Անակի կողմից, որ Հայաստան էր եկել իբր ապստամբ, իսկ Եղիշեի մոտ տեղեկություն է պահպանված, որ նրան սպանեցին եղբայրները[33]։ Խոսրովի մահից հետո փախցնում են նրա որդուն՝ Տրդատին։ Պատմագիտության մեջ հաճախ այս Տրդատին (որ Տրդատ Մեծն է) նույնացնում են Զոնարասի հիշատակած Տրդատի հետ։ Համաձայն Խորենացու, Խոսրովի սպանությունը կատարվել է Վալերիանոսի ժամանակ, Զոնարասի մոտ՝ Տրդատը փախչում է Գալլոսի օրով։ Չէր կարող որդին երկիրը թողնել հոր մահվան պատճառով, բայց նրա մահից առաջ։ Տրդատը պետք է երեխա լիներ («մանկիկ մի փոքրիկ»), երբ նրան տանում էին հունաց կողմերը, իսկ այստեղ հասուն մարդ է, որդիների հայր, որոնք չեն ուզում հետևել նրան։ Վերջապես Տրդատի փախուստի համար Զոնարասը բոլորովին այլ շարժառիթներ է նշում, քան ազգային ավանդույթը։ Նա պետք է լինի ոչ թե Խոսրովի որդին, այլ հայրը՝ Տրդատ II-ը, որին թագ տվեց Մակրինոսը 217 թ.։ Քառորդ դարից ավելի նա է պայքարում Սասանյան Պարսկաստանի դեմ։ Խոսրովի գահակալությունը և մահը ընկնում է Տրդատ II-ի փախուստից հետո (252/3 թ.), մինչև 257/8 թ.։

Վալերիանոսը գալիս է արևելք՝ դիմագրավելու պարսիկներին։ Խառանի և Եդեսիայի մոտ տեղի ունեցավ ճակատամարտ, որ անհաջող էր հռոմեացիների համար և կանխորոշեց հետագա իրադարձությունները։ Վալերիանոսը գերվում է 260 թ. սկզբին։ Այդ առթիվ Տրեբելլիոս Պոլլիոնը հիշատակում է հայոց թագավոր Արտավազդի նամակը Շապուհին։ Արտավազդի ինքնությունն այստեղ մեզ չի հետաքրքրում[34], բայց 260 թ. համար նա հիշատակվում է իբրև

---

[32] Ս. Երեմյանը կարծում է, որ Տրդատ II-ին փոխարինեց Արտավազդը (252/3—261), «որին ճանաչեց Շապուհ I-ը», իսկ Խոսրովը իր հոր՝ Տրդատ II-ի հետ դնաց Հայաստանի հռոմեական մասը, ուր և թագավորեց 273—287 թթ. («Մեծ Հայքի թագավորության բաժանումը», էջ 81)։

[33] «Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», Երևան, 1957, էջ 72։

[34] Ալիշանը կարծում է, որ դա Արտավազդ Մանդակունին է՝ Տրդատի խնամակալը («Այրարատ», էջ 374), Տաշյանը համարում է նրան Շապուհի կողմից դրված «թագավոր մը» («Ագա-

Հայաստանի գերագույն իշխող։ Արտավազդի նամակից երևում է, որ Հայաստանը այդ ժամանակ դեռ անկախ էր. չնայած հարում էր պարսիկներին։ Դրան համաձայն են և հայկական աղբյուրները։

Խոսրովի մահից հետո (257/8 թ.) նախարարները միաբանում են՝ երկիրը պարսիկների ներխուժումից ապահովելու համար և գիմում հռոմեացիների օգնությանը. «Յետ սուսերահարն լինելոյ Խոսրովու, միաբանեալ նախարարք Հայոց ածեն իւրեանց յօգնականութիւն զզօրս Յունաց, որ ի Փռիւգիա՝ պարսից ընդդիմանալ և պահել զաշխարհս»[35],— գրում է Խորենացին։ Ուրեմն Խոսրովի մահից հետո Հայաստանը չէր նվաճված, և Արտավազդի իշխանությունը վերաբերում է այդ շրջանին։ Խորենացու ասածներից երևում է, որ հռոմեացիները անզոր էին օգնելու, և Շապուհի որդին՝ Արտաշիրը մտնում է Հայաստան. «Վասն որոյ,— գրում է նա,— համարձակաբար արշաւեալ ի մեզ Արտաշրի, և զզօրս Յունաց փախստական արարեալ, դերելով զյոլով մասն աշխարհիս՝ յաւեր դարձուցանէ»[36]։

Կարելի է որոշել, թե պարսիկները երբ նվաճեցին Հայաստանը։ Արտավազդը Շապուհին նամակ է գրում Վալերիանոսի գերության առթիվ։ Վալերիանոսը գերվել է 260 թ., SKZ արձանագրությունը գրված է 262 թ. ոչ առաջ, այնտեղ երկու անդամ Որմիզդ-Արտաշիրը հիշվում է իբրև «Հայաստանի մեծ թագավոր»։ Նշանակում է՝ պարսիկների իշխանության սկիզբը պետք է համարել 260 և 262-ի միջև ընկած թիվը՝ 261։ Այդպես է և Խորենացու տվյալներով։ Խորենացին գրում է, որ ազգային պետության բարձումից հետո Հայաստանում ծայր է առնում անիշխանության շրջանը «ժամանակս անիշխանութեան», որ տևել է 27 տարի։ Նա անիշխանության վերջը (Տրդատ Մեծի գահակալության տարին) համարում է «յերրորդի ամի Դիոկղետիանոսի», այսինքն 287 թ.։ Եթե դրանից 27 տարի ետ գնանք, կստանանք 261 թ.[37]։

թանգեղոս առ Գեորգա ասորի», էջ 113)։ «Դժվար է, թե այդ անձը թագավոր մը եղած ըլլա, թերևս գործակալ կամ հրամանատար մը էր և թերևս նույնն է Մամիկոնյան այն Արտավազդին, որ հիշտ այդ ժամանակները կապրեր և քիչ առաջ փոքրիկ Տրդատը փախցնելով փրկած էր»,— խորհում է Աստուրյանը («Քաղաքական վերաբերություններ», էջ 245)։ «Հնարավոր է, որ դա նույն է Տրդատ II-ի խելամիտ որդիներից մեկը»,— գրում է Աննինսկին (նշվ. աշխ., էջ 44)։ Մանանդյանն այս ամենը համարելով չհիմնավորված՝ գրում է. «Կարելի է միայն հավանական համարել, որ այս Արտավազդ թագավորը, որը Սասանյան Պարսկաստանի կողմնակից էր, Հայ Արշակունիների տոհմից չէր» («Քննական տեսություն», էջ 93)։ Թումանովը հավաստի չի համարում Արտավազդի մասին (իբրև Հայոց թագավորի) Տրեբելլիոս Պոլլիոնի վկայությունը (տե՛ս „Revue des études Arméniennes", 1969, էջ 255—256)։ Ս. Երեմյանը նախ համաձայնում է Մանանդյանի հետ, որ Արտավազդը Հայ Արշակունիների տոհմից չէր և ընդունում Ալիշանի կարծիքը. «Ստորև կտեսնենք,— գրում է նա,— որ այդ ենթադրությունը հավանական է դառնում Res gestae-ի տվյալների լույսի տակ» («Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, էջ 62—63), հետո նա գտնում է, որ Արտավազդը, անշուշտ, Արշակունի դինաստիայից էր և տարագիր Տրդատ II-ի ազգականներից՝ Արշակունի սեպուհներից մեկը («Նոր նյութերի հետազոտությունը բերեց հակառակ եզրակացության»,— գրում է նա (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1975, № 1, էջ 14)։ Իր երրորդ հոդվածում Ս. Երեմյանն Արտավազդին համարում է «Տրդատ II-ի որդիներից մեկը, կամ նրա եղբայրը» («Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 1, էջ 91)։ Կարծում ենք ճիշտ է Ալիշանը, որ հենվում է Խորենացու վրա։

[35] Խորենացի, Բ, հգ։

[36] Նույն տեղում։ «Զզօրս Յունաց փախստական արարեալ» բառերից բխում է, որ երկրում դեռ հռոմեական զորքեր կային։

[37] Անիշխանության շրջանը, Խորենացու 27 տարվա դիմաց, Ս. Երեմյանը հաշվում է նախ 50 տարի՝ 237—287 թթ. («Նախշ ի Ռուստեմի «Քաաբա ի Զարդուշտի» հուշարձանի արձանա-

Վերջապես կա նաև մի երրորդ տվյալ։ Սեբեոսը, հիշելով Խոսրովի մահը, որով ընդհատվում է Արշակունիների իշխանությունը Հայաստանում, ավելացնում է. «Եւ տիրէ ի վերայ աշխարհիս Հայոց Արտաշիր արքայ պարսից, ամս ԺԱ»[38]։ Որմիզդ-Արտաշիրը Պարսից գահը ժառանգել է 272 թ.։ Մինչ այդ նա տասնմեկ տարի («ամս ԺԱ») իշխում էր Հայաստանում։ Եթե 272 թ. տասնմեկ տարի դուրս գանք, նրա գահակալության սկիզբը կլինի 261 թ.։

Այդպիսով, հայկական և օտար աղբյուրների համաձայն Հայաստանը դիմագրավում է Սասանյաններին Արտաշիր I-ի գահակալության երկրորդ տարուց մինչև 261 թ.։

ЗАВОЕВАНИЯ САСАНИДОВ НА ЗАПАДЕ И АРМЕНИЯ

Доктор филол. наук А. А. МАРТИРОСЯН

(Резюме)

Статья посвящена политическим отношениям между Сасанидским Ираном и Арменией в первой пол. III в. Придя к власти, Сасаниды предприняли ряд походов на запад, чтобы восстановить границы державы Ахеменидов. Долгое время Армения отражала эти натиски, оставаясь независимой. В статье делается попытка установить хронологические рамки рассматриваемого периода—от времени восшествия на престол Ардашира I до 261 г., после чего началось, по выражению Хоренаци, «время безначалья». Анализ событий показывает, что мирный договор, заключенный в 244 г. императором Филиппом и Сапором I, действительно не изменил границ между Ираном и Римской империей.

գրության վկայությունները Հայաստանի մասին», էջ 68), ապա՝ 36 տարի՝ «262—298 թթ. միջև» («Մեծ Հայքի թագավորության բաժանումը», էջ 82)։

[38] «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 15։